

Մեռաւ ռի նա շուտ, վարձքին անծանօծ .
 Չը վայելց բնաւ իր արդեանց արտուղ .
 Տեսնելով թերեւս ազգին առաւօտ .
 Սիրտը կանգ առաւ խիղճէն . յորդարեւոյն .
 Կամ չէր յուսար բան մը գեղեցկագոյն
 Այլ անուհետեւ տեսնիլ երկրի վրայ .
 Դոյութեան պատճառ բաղձն էր ազգերուն .
 Միասին գըտաւ նըպատակն ու մտնի .
 Այլ դուք, ո՞վ ազգեր, դադրեցէք լալէ .
 Արցունքն անոնց է որ չտեսան ձեր դար .
 Արեւուն մէջէն ճառագայթ կ'ելլէ
 Վարդէն չի՞ ծնանկիր միշտ վարդ մը պայծառ .

Կորիւնն առիւծի Ժայռին վրայ կ'տեսնամ .
 Թող իր բոց աչքեր լոյս տան աշխարհի .
 Մագեր կանայցած դաւիթի թող դառնան
 Բարձրանան ինուհնգ . նոր լոյս չըմարի .
 Թեւերուդ վրայ կանգնած փու երկիր
 Լոյսի օդին մէջ պիտ' բարձրանայ վեր .
 Որդիներուդ մէջ փայլիլէ կ'նստալիր
 Զերդ պայծառ լուսինն աստղերու՝ գիշեր .
 Արցունիքդ ըլլայ սիրտ Ժողովրդեան .
 Փառքն ըլլայ թող ֆեզ ոսկեգօծ վրան .
 Ոչ միայն, Հօրդդ պէս, ծոցը պատմութեան
 Ապրէ դուն անուիւն նստել գաւիթ վրան :

Հ. Կ. Տ. ՍԱՆՏԱՆՈՍ

Ամերիկանայէրք. — Հայ մը Ամերիկայի մէջ դատաւոր կ'ընտրուի: Նիւ Ճէրզի նահանգի, Հըտսըն գաւառի, Ռւէսթ Հոպըքընի բաժնին համար՝ Տիգրանակերտցի հայ երիտասարդ մը Միքայիլ Գալեֆիլիան հաշտարար դատաւոր անուանուած է, ամերիկացի թեկնածուներուն վրայ յաղթանակ տանելով, շնորհէ տեղւոյն ռամկավար կուսակցութեան: Դէպքը նշանակալից է. Հայը ոչ միայն կարող է հաւասարիլ, այլ նաեւ գերազանցել, իբր ըստաւարացի, զարգացած ազգերու անհատներն ալ, եթէ միջոցները ներեն: — Վտանգ մը կ'ընկերէ սակայն Ամերիկահայոց զարգացման, տտարացումը, « Գաղաքացի » թերթի վիճակագրութիւնը ցոյց կու տայ 34 դէպքեր այս տեսակէն ի Գալիֆոռնիա: Ամերիկահայոց ազգային կեանքը կը կայանայ զլիաւորապէս լատաւնական համարմարմունքներու մէջ, որ սակայն նուազ եռանդով յառաջ կը զոյգուին: Փալիֆոռնիոյ մէջ նոյեմբեր 6ի ընտրութեանց ժամանակ Հայերը մեծ յաջողութիւն գտած են իրենց ընտրելիներու մեծամասնութիւնը հասած ըլլալով առաջարկեալ պաշտօններու: **Եգիպտահայք.** — Հայկական Բարեգործական Միութիւնը այժմ 250 անդամ կը հաշուէ: Դրամագլուխն է 3365 եգիպտ. ոսկի. Պօղոս Ժաշա Նուպարի քոյրը Տիկին Լ. Քափամանեան նուիրած է 400 ոսկի, ուրիշ մը՝ 300: Գահիրէի Հայոց լատարան-ընթերցաստան վարչութիւնը ընդարձակ վիճակահանութիւն մը կազմակերպած է: Տ. Արմէնեան և Տ. Պապանեան, հայ դերասաններ, յաջողութիւն գտած են Եգիպտահայոց տուած ներկայացմանց մէջ, Գահիրէի Հայ Թատերասիրաց ընկերութիւնը զադրած է գործունէութենէ:

Կովկասահայք. — Հայութիւնը զրադած է Նոր-Դումայի ընտրութիւններովը: Ազգային ամենէն նշանակալից երեւոյթն է այն՝ որ Մշակի խումբը այժմ կը գործէ իբր առանձին սոցիալ-դեմոկրատ կուսակցութիւն, որոշ շաբաթ մ'ընտրելով իրեն: Հայ կառակորդ կուսակցութիւնը, այս առիթի, ներքստպէս աւելի զօրանալու պէտքն զգալով, ընդհանուր ժողով մը կազմակերպած է բարենորոգուելու և զեղծումներու առաջն առնելու համար: Երկիր դադրած է և անոր յաջորդած է Ժամանակ:

Եւրոպահայք. — Փարիզ Հայկական Միութիւնը նուազահանգէս մը սարքած է. երաժշտապետ՝ Կոմիտաս վրդ. բանախօս՝ Ա. Զօպանեան:

Պոլսահայք. — Ստրանհոյակ առժամա դադրած է: Հայ տիկին մը 160 ոսկի նուիրած է Հիւանդանոցին, Պետրոս էֆ. Կարապետեան 600 ոսկի Վանայ Երաման վարժարանին, 27 ոսկիով Զուհանեանի արձանը կանգնուած է:

ԼՐԱՏՈՒ